163. 05/15, Դիտորդի համոզմամբ, ՀՅԴ վստահված անձը ոգելից խմիչքի ազդեցության տակ է:
164. 03/24, Քաղաքացի Թադևոսյան Մանվելը տեղեկացրել է, որ իր և իր մոր փոխարեն, ինչպես նաև իրենց հարևանների՝ Ալեքսանյան Ալիկի և Ալեքսանյան Դիանայի փոխարեն, որոնք այժմ գտնվում են Շվեդիայում, տեղամասում քվեարկած է եղել: Արձանագրություն է կազմվել, սակայն կրկին չի քվեարկել: Հանձնաժողովի անդամը բացատրել է, թե սխալմունք է եղել, սակայն ոչ մի հնարավորություն չընձեռնվեց քաղաքացուն քվեարկել քաղաքացին այսիսով գրկվել է քվեարկելու իրավունքից:
165. 32/01, Համատարած բաց քվեարկություն և գովք իշխանության հասցեին:
166. 30/27, Դիտորդը հայտնել է, որ հանրաքվեի ընթացքում կարճ ժամանակ կուտակումներ են եղել քվեարկության սենյակում, քանի որ ընտանիքի անդամներ, ովքեր միասին են եկել քվեարկության, քվեարկելուց հետո սպասել են, որ ընտանիքի մյուս անդամները ևս քվեարկեն և դուրս չեն եկել քվեարկության սենյակից, նշելով, որ դրսում ցուրտ է: Դիտորդը միջամտել է, որից հետո քվեարկած անձինք դուրս են հրավիրվել քվեարկության սենյակից:
167. 32/01, ՀՀԿ երկու վստահված անձ միաժամանակ գտնվում են տեղամասում: Այդ փաստի առիթով դիտորդի նկատողությանը ի պատասխան հանձնաժողովի նախագահը պատասխանում է, որ դրսում ցուրտ է, նա չի կարող դրսում կանգնել:
168. 32/01, ՀՀԿ վստահված անձանց և հանձնաժողովի անդամների ձեռքին կան ցուցակներ: Հանձնաժողովի անդամները նշումներ են կատարում այդ ցուցակներում՝ համեմատություններ կատարելով ընտրողների ցուցակների հետ: Ընտրողները ներկայանում են քվեարկության

թերթիկների վրա նախապես գրառված համարներով՝ ակնհայտորեն ուրիշի փոխարեն քվեարկելու նպատակով:

169. 08/09, տեղամասում արձանագրվել է բաց քվեարկություն, ընտրողների կուտակումներ:
170. 28/30, Բալահովիտի գորամասի ընտրատեղամասում տեղի է ունեցել բաց քվեարկություն, կատեսանյութ:
171. 29/08, Քվեարկելու եկած անձինք պարզել են, որ իրենց ազգականները, ովքեր գտնվում են Հայաստանից դուրս, արդեն «քվեարկել են»: Նրանք այդ փաստի մասին հայտնել են հանձնաժողովի նախագահին, ով չի արձանագրել խախտումը:
172. 34/25, Դիտորդին արգելում են ազատ տեղաշարժվել ընտրատեղամասում: Մյուս դիտորդին հեռացրել են ընտրատեղամասին:
173. 38/61, Արփի Ադամյանը (094043081) հայտնեց, որ 38/61 ընտրատեղամասում մեկ անձի տրամադրվեց 5 քվեաթերթիկ: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է և պատասխանել, որ իր բարեկամներն են: Նման դեպքեր կրկնվում են:
174. 08/29, Դիտորդը տեսագրել է ընտրողների զանգվածային փոխադրություն:
175. 30/06, Դիտորդը հայտնել է, որ ընտրատեղամասում գտնվում է ՀՀԿ վստահված անձը, քվեարկողների մեծ մասը ճանաչում են նրան, խոսում են նրա հետ, նա իր ձեռքին ունի տետր, որտեղ նշումներ է կատարում, անընդհատ դուրս է գալիս տեղամասից, որից հետո նորից մարդկանց հոսք է նկատվում: Դիտորդը ենթադրում է, որ վստահված անձն ուղղորդում է քվեարկողներին:
176. 38/16, Առավոտյան քվեարկող է եկել տեղամաս, այնուհետև նույն անձը ավելի ուշ այցելել է տեղամաս և մուտքի մոտ զրուցում է մարդկանց հետ առավոտնից մինչ այս պահը:
177. 33/69, Հանձնաժողովի քարտուղարը փորձել է տրցակով լցնում կատարել, դիտորդը տեսել է, որից հետո քարտուղարուհին տրցակով հեռացել է գուգարան: Հանձնաժողովի նախագահը փորձել է բանակցել դիտորդի հետ, սակայն դիտորդը մերժել է: Դիտորդը տեսանկարահանել է, թե ինչպես են քվեաթերթիկների տրցակը սեղանի տակից հանում, ինչպես են առանց կնիք աշխատում:
178. 21/12, տեղամասի նախագահն արգելում է դիտորդին հսկել ընտրողների ցուցակները եւ քվեաթերթիկ տալու գործընթացը:
179. 03/06, Դիտորդը նկատել է և տեսաձայնագրել, թե ինչպես հանձնաժողովի՝ ընտրողների ցուցակում գրանցման համար պատասխանատու անդամը, պարբերաբար ստորագրում է ընտրողների ցուցակում՝ հավանաբար հնարավոր բացականների անվան դիմաց և սեղանի տակ թաքցրած թղթի միջոցով կատարում է ճշգրտումներ: Տեսաձայնագրությունն առկա է:
180. 31/59, Դիտորդը հայտնել է, որ մեկ անձը քվեարկել է նաև իր եղբոր փոխարեն:
181. 31/59, Դիտորդը հայտնել է, որ ընտրատեղամասի տարածքում գտնվում է այլ անձ, ով հայտնել է, որ գյուղապետարանի աշխատակից է և ուղղակի օգնում է: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին, որից հետո գյուղապետարանի աշխատակից ներկայացրած անձին հեռացրել են,

բայց հետագայում նա կրկին շրջել է ընտրատեղամասում, ու նորից հեռացվելուց հետո, կրկին ներս է մտել:

182. 30/35, ՀՀԿ վստահված անձը անընդհատ ներսուղուրս է անում տեղամաս և կարգավորում քվեարկության ընթացքը, ինչպես նաև գրուցում իր իսկ ներկայացմամբ շտաբի անդամի հետ, որը ինչ-որ ցուցակ ձեռքին մի խումբ տարեցների հետ այցելել է տեղամաս:
183. 28/20 Ճնշում հանձնաժողովի անդամների կողմից, սպառնալիքներ դիտորդների հասցեին
184. 37/13, Բազմակի քվեարկություն է տեղի ունեցել տեղամասում:
185. 07/01, Դիտորդը՝ Քեթքարթ Ուիլը, նկատել է, որ երկու քույրերի Հոփսիսիմե եւ Գայանե Հովսեփյանները եկել են քվեարկության, սակայն անվան դիմաց արդեն եղել են ստորագրություններ: Հանձնաժողովը խախտումը չի արձանագրել:
186. 30/07, Նույն անձինք փորձել են կրկնակի քվերակել: Միաժամանակ, դիտորդը նշել է, որ չի կարող հավաստի տվյալներ հաղորդել, սակայն իրեն թվացել է, որ երկու հոգի քվեարկել են այլ անձի փոխարեն: Կրկնակի քվեարկության մասով դիտորդի միջամտությամբ խնդիրը լուծվել է եւ տվյալ անձինք չեն քվեարկել, այլ անձի փոխարեն քվեարկելու խնդրով դիտորդը կրկին դիմել է հանձնաժողովի նախագահին, ով նայել է քվեարկողների անձնագրերը և նշել, որ նրանք այլ անձի փոխարեն չեն քվերակել:
187. 09/16, Երկու խումբ մեքենայով անձանց բերեցին, նկարել եմ, նկարները կան քվեարկողների մեծ մասը տեղեկանքներով են գալիս, շրջաններից տեսագրված է:
188. 29/08, Քվեարկության սենյակում գտնվում են կողմնակի անձինք, ովքեր ազատորեն հսկում են ամբողջ գործընթացը:
189. 28/20, անհայտ անձինք լցնել են քվեատուփը: Հանցագործությունը հանձնաժողովը չի արձանագրել:
190. 21/12, Դիտորդին չեն թույլատրում ընտրացուցակին մոտ գալ եւ դիտարկել ընտրացուցակները եւ ընտրողների գրանցման պահը:
191. 32/05, դիտորդը հայտնում է, որ 14.50-ի սահմաններում եղել է կուտակում քվեարկության սենյակում, մասնավորապես, քվեարկողների թիվը գերազանցել է 15-ը: Դիտորդները դիմել են ոստիկաններին, ովքեր կարգավորել են խնդիրը՝ դուրս հրավիրելով քվեարկության սենյակում գտնվող 15 թիվը գերազանցող անձանց:
192. 10/20, ընտրատեղամասում կրկնաքվեարկություն է եղել, տեղամասի նախագահը տեղյակ է, բայց արձանագրություն չի կազմվել: Ըստ Լրագրողի տեսախցիկն է կոտրել, ու քրեական գործ է հարուցվել, լրագրողին եւ վստահված անձանցից մեկին տանում են բաժանմունք: Դավիթ Միմոնյանը ՀՀԿ-ի վստահված անձ, ջարդեց Ըստ Լրագրողի տեսախցիկը, լրագրողի ազգանունը՝ Աֆրիկյան:
193. 29/08, Այս պահին կատարվում է բազմակի քվեարկություն: Հանձնաժողովի անդամները չեն խոչընդոտում:
194. 29/08, Տեղամասի հարակից տարածքում՝ 50 մետր հեռավորությամբ, և քվեարկության սենյակում եղել են կուտակումներ:

195. 30/35 Մի քանի կողմնակի անձիք գտնվում են տեղամասում, հետևում են քվեարկության ընթացքին:
196. 30/35, Տեղամասում և հարակից տարածքում մարդկանց կուտակումներ են, որոնք խոչընդոտում են հանրաքվեի բնականոն ընթացքը:
197. 12/11, Հանձնաժողովի նախագահը, անդամները խոչընդոտել են դիտորդների աշխատանքը, կյանքի համար վտանգավոր սպառնալիքներ են հնչեցրել, ահաբեկել են, որի արդյունքում դիտորդները՝ Գաբրիելյան Սերգեյը և Սահակյան Արմանը ստիպված են եղել լքել տեղամասը: Դիտորդները ունեն ձայնագրություն:
198. 31/47, երկու անգամ բաց քվեարկություն է եղել, ընտրատեղամասի նախագահը տեղյակ է դրա մասին: Մինչ այս պահը 414 հոգի քվեարկել է:
199. 03/15, Ընտրողը տեղամասից դուրս գալիս ընտրողը ստացավ կաշառք օդու տեսքով:
200. 10/08, Տեղամասում ժամը 14:00-ի դրությամբ գրանցամատյանում կա 130 ստորագրություն, սակայն տրվել է 150 քվեաթերթիկ:
201. 29/11, Տեղամասում կրկին գրանցվել է դեպք, երբ իբր հաշմանդամները քվեարկում են մեքենայի մեջ: Քվեաթերթիկը դուրս է բերվում տեղամասից, քվեարկությունը կազմակերպվում է տեղամասից դուրս՝ տրանսպորտային միջոցի մեջ, որից հետո քվեաթերթիկը վերադարձվում է տեղամաս՝ վստահված անձի կողմից:
202. 21/14, Մի քանի ընտրողներ պարբերաբար նորից մտել են ընտրելու, հանձնաժողովի կողմից ոչ մի զգուշացում չի եղել: Բազմակի ընտրությունը շարունակվում է: Խախտումները չեն արձանագրվում:
203. 09/22, Դիտորդը ակնատես է եղել, թե ինչպես է վստահված անձը Արմինե Աբովյանը ինչպես է խոչընդոտում ILuri լրագրող Դիանա Սմբատյանի աշխատանքը եւ նրա հասցեին սպառնալիքներ հնչեցնում: Վիդեո ունի լրագրողը: Նախագահը չի արձանագրել:
204. 21/01, Հանձնաժողովի նախագահը առավոտնից հրահանգել է հանձնաժողովի անդամներին դիտորդներին թույլ չտալ գրանցումներ կատարել: Դիտորդը գրեթե չի կարողանում պատշաճ կերպով հսկել քվեաթերթիկ ստանալու պրոցեսը:
205. 21/12, Հանձնաժողովի անդամները պարբերաբար արգելում եւ խոչընդոտում են դիտորդին կատարել իր պարտականությունները, գրառումներ կատարել, պարզել՝ արդյո՞ք ընտրողը իր անվան դիմաց է ստորագրում քվեաթերթիկ ստանալիս:
206. 34/06, Մուսաննա Գեւորգյան անունով քաղաքացին եկել է ընտրատեղամաս ու պարզել է, որ Հայաստանից դուրս գտնվող իր հարազատների փոխարեն արդեն քվեարկել են: Բողոքել է հանձնաժողովի նախագահին, վերջինս ասել է, որ կփորձեն մի բան անել, բայց խախտումը չի գրանցվել ոչ մի տեղ:
207. 28/20, Հանձնաժողովի անդամներից մեկը սպիտակացել է դիտորդներին, թե .-Լցոնումների նկարները ուղարկվելու դեպքում լավ չի լինի ձեր վերջը:

208. 05/02, Կողմնակի անձը եկել էր քվեարկելու, հայտնաբերել են, որ ցուցակում չկա, սակայն նա սպասում է կողքի սենյակում, հանձնաժողովի նախագահը դրսևորում է անգործություն:
209. 20/38, Հանձնաժողովի նախագահը խոչընդոտում է դիտորդի աշխատանքը եւ անհարգալից վերաբերմունք դրսևորում դիտորդի եւ ՁԼՄ ներկայացուցչի հանդեպ:
210. 09/17 Հանձնաժողովի նախագահի կնիքը հայտնվել էր հանձնաժողովի անդամ Սոնայի մոտ, իսկ Սոնայի կնիքը հայտնվել էր աղբամանում, ԿԸՀ-ին տեղեկացրել են եւ այդ ժամանակ դադարեցրել են քվեարկությունը, իսկ այդ կորած կնիքը գտել են աղբամանից:
211. 41/27, Դիտորդ հայտնել է, որ հանձնաժողովի անդամներն արգելել են դիտորդներին ընտրողների ցուցակները հսկել:
212. 05/16 տեղամասում ՀՅԴ վստահված անձը՝ Սուրեն Կարապետյանը, խոչընդոտում է դիտորդի՝ Վարդան Համբարձումյանի աշխատանքը:
213. 33/75 տեղամասում դիտորդին կաշառք են առաջարկել խախտումների վրա աչք փակելու պայմանով, թեթև վիճաբանություն առաջացել: Ընտրատեղամասի մոտ դիտորդը մի քանի անգամ նկատել է, որ փող են բաժանում:
214. 30/28, Հանձնաժողովի նախագահը արգելել է դիտորդին գրառումներ/նշումներ կատարել մասնակիցների ցուցակից, որից հետո նրանից վերցրել է գրառումների թղթերը և պատռել:
215. 04/05, Դիտորդների ձեռքից հանձնաժողովի նախագահը սպառնալիքներով խլել է տեսագրություններով հեռախոսները, ջնջել պարունակությունը և նոր վերադարձրել:
216. 37/54, քվեարկել է մի անձ, բայց ընտրամատյանում այլ անձի անվան դիմաց է ստորագրվել և կնքվել:
217. 38/05 տեղամասում ֆիզիկական բռնություն է տեղի ունեցել, քաշքշուք: Դիտորդները զանգերին չեն պատասխանում:
218. 41/06 տեղամասում հանձնաժողովի անդամները նշել են, որ դիտորդներն իրավունք չունեն ծանոթանալ ընտրացուցակներին եւ փորձել են խոչընդոտել նաև ազատ տեղաշարժին: Դիտորդները պնդել են, որ իրենց իրավունքները չեն կարող սահմանափակվել՝ վկայակոչել համապատասխան նորմերը, որից հետո խնդիրը լուծվել է:
219. 25/01, Լցոնումներ են կատարել ժամը 13:44, Խոչընդոտել են դիտորդներին նկարահանել, սահմանափակել են դիտորդների տեղաշարժի ազատությունը:
220. 38/19, տեղամասում մեկ ծրարի մեջ 2 քվեաթերթիկ են բաժանել:
221. 07/26, Ռուսաստանի քաղաքացի է արդեն 7 տարի ու դեռ ցուցակում է, եղբայրը ահագանգել է, որ ոստիկանությամբ իր տվյալները արդեն հանված են, բայց չգիտես ինչպես նորից հայտնվել են:
222. 25/01, Քվեատուփի եւ նախագահի սեղանների մոտ կուտակումներ են, դիտորդներին խոչընդոտում են իրենց պարտականություններ կատարել:
223. 06/06, Բազմակի քվեարկություն է եղել տեղամասում, ընտրողներին են ուղղորդում, հանձնաժողովը մերժում է գրանցել խախտումները: Դիտորդի եւ լրագրողի հասցեին անհայտ, չգրանցված անձինք սպառնացել են, եթե իրենք չդադարեցնեն դիտորդությունը եւ հսկողությունը:



224. 34/04-Դիտորդների աշխատանքներն են խոչընդոտել, հանձնաժողովի անդամները և նախագահը թույլ չեն տալիս դիտորդներին մոտենալ գրանցամատյաններին, ընտրացուցակներին, մարդկանց անձնագրային տվյալների համապատասխանության ճշտում կատարել:
225. 08/25 տեղամասում 4 հոգի քվեարկել են կրկնակի անգամ: Հանձնաժողովի նախագահը խախտումը չի արձանագրել:
226. 37/13 տեղամասում պարզվել է, որ ընտրողի փոխարեն արդեն քվեարկել են:
227. 05/08 տեղամասում հանձնաժողովի նախագահը արգելում է նկարահանել տեղամասը: Դիտորդներին ահաբեկում եւ սպառնում է շարունակ:
228. 08/25, տեղամասում երիտասարդ մի ընտրող քվեարկություն է կատարել երկրորդ անգամ՝ քվեածրարը գցել է քվեատուփի մեջ, որից հետո են ստուգել, որ նրա անձնագրում առկա է եղել դրոշմակնիքը: Հենց այդ մասին բարձրաձայնել են, ընտրողը շտապ հեռացել է տեղամասից: Հանձնաժողովը չի արձանագրել խախտումը:
229. 37/54, ընտրողներից մեկի անձնագրերի մեջ կնիք են դրել, բայց տվյալ անձը չի քվեարկել:
230. 33/77, Գյումրի, 19 դպրոց, ժամը 12:40-ի հատվածում մի ընտրող եւ մի անձանոթ, որ պարբերաբար ելումուտ է արել տեղամաս, վեճ ու ծեծկռուտք է եղել, որից հետո երկուսն էլ հեռացել են տեղամասից:
231. 34/01, Գյումրի, տեղամասում ժամը 13.00 դրությամբ ընտրողներին գազելով են ընտրատեղամաս բերել, մեծ կուտակումներ են այս պահին: Հանձնաժողովի նախագահը չի կարողանում կարգավորել վիճակը:
232. 10/15, Ընտրողն ահագանգել է, որ 10/15 տեղամասում ընտրացուցակում ստորագրելիս նկատել է, որ հանրապետությունից այս պահին բացակա իր եղբոր եւ նրա կնոջ անվան դիմաց ցուցակում ստորագրված է: Այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովին, բարձրաձայնել է, սակայն նրա խոսքերին ուշադրություն չեն դարձրել, խախտումը չեն արձանագրել:
233. 03/28, տեղամասում ՀԱԿ վստահված անձին անհայտ անձինք շարունակ փորձում են դուրս հանել տեղամասից, ինչ որ գրույցի եւ այդպիսով փաստացի խոչընդոտում են նրա իրավունքների իրացմանը: Ոստիկանությունը միջոցներ չի ձեռնարկում խափանելու այդ գործողությունները:
234. 30/32 Դիտորդը հայտնել է, որ հանրաքվեին մասնակցելու համար եկել է քաղաքացի, ում անվան դիմաց արդեն իսկ ստորագրված է եղել, հանձնաժողովի անդամները թույլ չեն տվել մասնակցել հանրաքվեին:
235. 09/01, տեղամասում պարբերաբար 15-ից ավել ընտրողների կան, պարբերական կուտակումներ են:
236. ՀՀԿ վստահված անձը խոչընդոտում է դիտորդի աշխատանքը, տեղամասում քննիչներ են, դիտորդին քննում են:
237. 07/15, Հանձնաժողովի նախագահ Կարինե Կարապետյանը հրաժարվում է արձանագրություն կազմել կուտակումների մասին: Տեղամասում պարբերաբար քառս է: Կատարվել է տեսագրություն:
238. 07/01 տեղամասում ընտրողներին ուղղորդում են եւ ներսում եւ դրսում:

239. 29/25, տեղամաս են մտնում կողմնակի անձիք, որոնք ընտրողներ չեն ու այնտեղ գտնվելու իրավունք ունեցողների խմբերից չեն, եւ վերահսկում են ընտրության ընթացքը: Խախտումը հանձնաժողովը չի արձանագրում:
240. 11/35 Դիտորդը հայտնում է, որ ընտրող՝ Ջոյա Ապրեսյանը եկել է քվեարկության, սակայն իր փոխարեն արդեն քվեարկած են եղել: Խախտումը հանձնաժողովը չի արձանագրել:
241. 30/27 տեղամասում 15-ից ավելի ընտրողների կուտակումներ են, հանձնաժողովի նախագահը հրաժարվում է վերացնել խախտումը:
242. 10/20, տեղամասում Դիտորդի հետ զրույցի ընթացքում կրկնակի քվեարկության դեպքից զատ 12:40-ին ընտրատեղամասում թեժ կոչվ էլ բղավոցներ են եղել, Կոտայքի մարզից բերվել էին ընտրողներ լրացուցիչ ցանկերով քվերակելու համար: Տեղամասում էր նաեւ Ջարուհի Բոստանջյանը:
243. 08/25, Մի անձը երկու անգամ է քվեարկել: Լուսանկար կա, սակայն հանձնաժողովը խախտումը չի արձանագրել:
244. 03/22, Երեք ընտրող՝ Հայկ, Աիդա, Տարոն Բրուսյանները եկել են ընտրության, սակայն իրենց փոխարեն արդեն ընտրել են, ստորագրված են եղել մատյաններում իրենց անունների դիմաց:
245. Դիտորդներին սկզբում խոչնդոտվել է ցուցակից քաղվածքներ անել, հետագայում թույլատրվել է: Կա գրանցամատյանի կնքման հետ խնդիրներ: Քվեխցիկի հետեւում կա դուռ, որը փակ է:
246. Տեղամասում գտնվող ՋԼՄ ներկայացուցիչ Անուշ Թովմասյանից ստացվել է ահազանգ, որ Աշտարակ քաղաքի փոխքաղաքապետ Գևորգ Եղիազարյանը որպես կողմնակի անձ մուտք է գործել տեղամաս եւ իրեն մոլորության մեջ գցելու փորձ արել՝ վստահեցնելով, որ օրենքը թույլ չի տալիս գրանցամատյանից ինֆորմացիա քաղել: Բացի այդ Անուշ Թովմասյանը հաղորդեց, որ ՀՀԿ անդամ Գեորգ Եղիազարյանը շրջում է քաղաքի ընտրատեղամասերով եւ նույն կերպ մոլորություն տարածում: Գրանցամատյանին ծանոթանալն ու գրառումներ կատարելը արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ:
247. 09/23, Հանձնաժողովի նախագահը կլոր կնիքը դուրս է բերել ընտրատեղամասից
248. 10/29, տեղամասում քվեատուփի վրա Սերժ Սարգսյանի լուսանկարն է փակցրած, հանձնաժողովի նախագահը հրաժարվում է հանել նկարը:
249. 13/09, ՀՀԿ երկու վստահված անձ միանգամից գտնվում են տեղամասում:
250. 03/23, Քանաքեռ-Չեյթուն, ՀՀԿ-ականը Ժառանգություն կուսակցության նստահիված անձի վկայական ունի եւ չի հերքում դա:
251. 06/05, Աջափնյակում, միաժամանակ ՀՀԿ երեք եւ ԲՀԿ երկու վստահված անձ են գրանվել գրանցամատյանում: Նույն տեղամասում Ժառանգության վստահված անձին թույլ չեն տվել ծանոթանալ գրանցամատյանին:
252. 32/01, Տաշիրում բաց քվեարկության շարունակական դեպքեր եւ բաց քարոզչություն է իրականացվում:

253. 25/21, Հրագրան քաղաք, թիվ 10 ավագ դպրոց, լցնում է տեղի ունեցել, շարունակ փորձում են շեղել դիտորդի ուշադրությունը:
254. 34/25 տեղամասում, Գյումրի, թիվ 7 դպրոց, հանձնաժողովի նախագահը դիտորդներից խլել են իրենց աշխատանքային գրառումների թերթիկները, կարգադրել է նկարահանումներ չիրականացնել: Ավելի ուշ ետ են տրվել աշխատանքային թերթիկները: Բանակցությունների ժամանակ հանձնաժողովի նախագահին բացատրվել են ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքները, վերջինս հասկացել է եւ խոստացել է չխոչընդոտել դիտորդների եւ ՁԼՄ ներկայացուցիչների աշխատանքին:
255. 35/34 , Գյումրի, թիվ 3 դպրոց, քվեախցում ցնդող գրիչներ են դրված:
256. 34/09 տեղամասում արգելել են ՁԼՄ ներկայացուցիչներին արդյունավետ հսկողություն իրականացնել քվեարթերիկ ստացողների եւ իրենց անվան դիմաց ստորագրելու հանգամանքի նկատմամբ: Հեռախոսային բանակցությունների արդյունքում ՁԼՄ ներկայացուցիչները հնարավոր են ստացել ակնդետ հսկողություն իրականացնել քվեարթերիկ ստանալու գործողության նկատմամբ:
257. Հաղորդում հանցագործության մասին-4 01/08 տեղամասում «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցի վրա է հարձակվել տեղամասային հանձնաժողովի նախագահը, խոչնդոտելով նկարահանումը: Կա տեսագրություն, կիրառարակվի ավելի ուշ:
258. 35/32 տեղամասում անձնագիր չունեցող երիտասարդին թույլ են տվել օգնել դժվար տեսող մի տարեց մարդու` քվեարկել, երիտասարդի բանավոր խոսքի հիման վրա վերջինիս անձնագրային տվյեղները գրանցելով գրանցամատյանում:
259. 11:12 Աշտարակի քաղաքապետի տեղակալը շրջում է քաղաքի տեղամասերում, հանձնաժողովի նախագահներին ահազանգելով թույլ չտալ դիտորդներին եւ ՁԼՄ-ներկայացուցիչներին հսկել ընտրողների գրանցամատյանները:
260. Գյումրու թիվ 6 դպրոցի տեղամասում ակնհայտ քարոզ է տարվում «այո» քվեարկելու օգտին:
261. 14/14 եւ 14/15 տեղամասերում լցնում է տեղի ունեցել մոտավորապես 10:30-ին:
262. 08/27 տեղամասում հանձնաժողովի նախագահը հայեղել է դիտորդին:
263. 30 ընտրատարածքային հանձնաժողովի անդամներ Կարեն Գրիգորյանը եւ Արտյոմ Աբրահամյանը (Լոռու մարզի սոց ապ բաժնի իրավաբան` ըստ նախնական տեղեկությունների) այցելել են 30/14 տեղամաս եւ ահաբեկել են «Քաղաքացի դիտարդ» նախաձեռնության դիտորդին, այն բանից հետո, երբ վերջիններս որոշ ձեռագիր քաղվածքներ է արել ընտրողների գրանցամատյանից: Սպառնացել են, որ նա քրեական պատասխանատվության կենթարկվի, եթե շարունակի գրառումներ անել:
264. 9/27 ընտրողների համար նախատեսված ցուցակն, որտեղ ստորագրում են քվեաթերթիկն ստանալուց առաջ, արդեն էջեր կան, որ լցված էին արդեն ժամը 9-ի դրությամբ: Լրագրողի հարցին, թե եղքան ընտրող չկա դեռ, չեն պատասխանում, իսկ թե ինչու չկա դրանց առջև հանձնաժողովի անդամի ստորագրությունը, կինը ասում է` մոռացել եմ ու ազատ ժամանակ ստորագրում է նրանց փոխարեն:

265. 30 ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Տիգրան Պապանյանը այցելել է 30/28 եւ 30/05 տեղամասեր եւ ահաբեկել է «Քաղաքացի դիտարդ» նախաձեռնության դիտորդներին, այն բանից հետո, երբ վերջիններս որոշ ձեռագիր քաղվածքներ է արել ընտրողների գրանցամատյանից: Սպառնացել է, որ նրան կձերբակալեն, ինչի հետո ստիպել է պատռել գրառումները:
266. 30 ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Տիգրան Պապանյանը այցելել է 30/28 եւ 30/05 տեղամասեր եւ ահաբեկել է «Քաղաքացի դիտարդ» նախաձեռնության դիտորդներին, այն բանից հետո, երբ վերջիններս որոշ ձեռագիր քաղվածքներ է արել ընտրողների գրանցամատյանից: Սպառնացել է, որ նրան կձերբակալեն, ինչի հետո ստիպել է պատռել գրառումները:
267. 07:25-08:11 Ահագանգ է ստացվել 36/39 տեղամասից, Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնք, այն մասին, որ հանձնաժողովի նախագահ Արփինե Խաչատրյանը հրաժարվում է գրանցել այնտեղ ներկայացած [www.asparez.am](http://www.asparez.am) կայքի ներկայացուցչին, որը ներկայացրել է անձնագիրը եւ ԶԼՄ կողմից տրված վկայականը: Բանակցություններից հետո հանձնաժողովի նախագահը գրանցել է ԶԼՄ-ներկայացուցչին, սակայն համառորեն հրաժարվել է գրանցել «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցչին, պնդելով, թե դա նույն [www.asparez.am](http://www.asparez.am) կայքն է: 15 տեւած բանակցությունները արդյունք չեն տվել, հանձնաժողովի նախագահ Ա.Խաչատրյանը այդպես էլ չի հասկացել, որ «Ասպարեզ» օրաթերթը այլ եւ [www.asparez.am](http://www.asparez.am) կայքը տարբեր զանգվածային լրատվամիջոցներ են, թեպետ դրանց հիմնադիրը նույն իրավաբանական անձն է, առաջինը տպվում է որպես տպագիր թերթ, իսկ երկրորդը լրատվական կայք է: Այսպիսով 36/39 տեղամասային հանձնաժողովի նախագահը կատարել է ՎԻՎ 40.6 հոդվածով նախատեսված զանցանք. գրանցամատյանի ոչ պատշաճ վարում, ինչը ենթադրում է նվազագույն աշխատավարձի մինչեւ 300 ապատիկ տուգանք: «Ասպարեզ» օրաթերթի խմբագիրը ժամը 08:15-ին բողոք է հղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին այս կապացությամբ, հիշեցնելով, որ տեղի է ունեցել ՀՀ քրեական օրենսգրքի 149 հոդվածով նախատեսված հատկանիշներով հանցագործություն՝ Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:
268. 08:40 10/20 տեղամասային հանձնաժողովի նախագահ Անահիտ Մադոյանը հրաժարվում է գրանցել «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցչին, չնայած այն բանին որ վերջինս պատշաճ ներկայացել է ու ներկայացրել է վկայականը: Խմբագրի զանգից եւ բանակցություններից հետո հանձնաժողովի նախագահը մնացել է անդրդվելի, ու խոստացել է ԿԸՀ-ից պարզել արդյո՞ք «Ասպարեզ» օրաթերթը ԶԼՄ է: Այսպիսով Անահիտ Մադոյանը կատարել է ՎԻՎ 40.6 հոդվածով նախատեսված զանցանք. գրանցամատյանի ոչ պատշաճ վարում, եւ ՀՀ քրեական օրենսգրքի 149 հոդվածով նախատեսված հատկանիշներով հանցագործություն՝ Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը: Այս մասին թերթի խմբագիրը բողոք է հղել ԿԸՀ նախագահին ժամը 08:56-ին:

269. 09:12 «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդներից եւ ՁԼՄ -ներկայացուցիչներից ստացված ահազանգերը հիմնականում հետեւյալ խմբերով են. 1. Տեղամասերում հանձնաժողովների անդամները խոչընդոտում են դիտորդների ու ՁԼՄ ներկայացուցիչների աշխատանքը, արգելելով ազատ տեղաշարժվել տեղամասի տարածքում, դիտել քվեարկողների փաստաթղթերը, եւ քվեարթերթիկ ստանալու համար նախատեսված մատյանները, համոզվել ու հավաստիանալ, որ մարդը ստանում է իր հասանելիք քվեաթերթիկը: 2. Մի քանի տեղամասերում պատճառաբանելով «Ասպարեզ» օրաթերթի եւ [www.asparez.am](http://www.asparez.am) կայքի խմբագրի տված վկայականների վրայի կնիքի որակը, փորձելով դուրս հանել ՁԼՄ ներկայացուցիչներին տեղամասերից, չնայած վկայականները կնքված են երկու կողմից: 3. Մի քանի տեղամասերում հանձնաժողովների նախագահները, փորձում են արգելել «Ասպարեզ» օրաթերթի եւ [www.asparez.am](http://www.asparez.am) կայքի ներկայացուցիչներից մեկնումեկի ներկայացույթները տեղամասում, պնդելով թե դրանք նույն ՁԼՄ-ն են, մի քանիսը չեն հասկանում, կամ չհասկանալու են տալիս, որ դրանք տարբեր լրատվամիջոց են:
270. 10/09 տեղամասում, Ջ.Կիրակոսյանի անվ. դրպոց, ինչ-որ մեկը ՀՀԿ անդամության վկայականով ընտրողներ է տարել բերել տեղամաս՝ քվեարկելու, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդին խոչընդոտել են լուսանկարել այդ արարածին:
271. 9/11 տեղամասից, որտեղ քիչ առաջ լրագրողներին արգելել էին ներկա լինել, քիչ առաջ վճճերից հետո հանձնաժողովի նախագահը ստիպված թույլ է տվել լրագրողներին ներս մտնել: Մակայն 40 րոպեից ավելի նրանց իրավունքը սահմանափակված է եղել, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածով նախատեսված հանցագործությունն է. «լրագրողի օրինական պարտականությունների կատարման խոչընդոտումը»: Այդ տեղամասերում, ենթադրվում է, որ քվեարկելու է Սերժ Սարգսյանը:
272. 9/11 տեղամասից, որտեղ քվեարկելու է Սերժ Սարգսյանը, հանձնաժողովի նախագահը ստիպել է դուրս հանել մի քանի լրագրողների, այդ թվում Մկրտիչ Կարապետյանին, չնայած այն հանգամանքին, որ նրանց իրենց վկայականներով պատշաճ ներկայացել են տեղամասի հանձնաժողովին եւ գրանցվել այնտեղ: Հանձնաժողովի նախագահը պատճառաբանել է, թե այդտեղ ՁԼՄ ներկայացուցիչ լինելու համար պարտավոր են նախագահականում հավատարմագրվել: Այսպիսով տեղի է ունենում ՀՀ քրեական օրենսգրքի 149 հոդվածով նախատեսված հատկանիշներով հանցագործություն՝ Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը: